

էջ 16) որ 1737ին ի Բերիա հանդիպած կը
դնէ: Երեք թուականներն ալ սխալ կ'երեւան.
վասն զի Սարգիս Վ. Կեսարիոյ առաջնորդու-
թեան ժամանակ միայն՝ Արքեպ. ձեռնադրուե-
լէն յառաջ, գնաց Բերիա 1732ին, որ ժամա-
նակը կրնայ հանդիպած ըլլալ սոյն դէպքը:
Սարգիս Վ. այն միջոցին Ատանա ալ գացած է,
ինչպէս վերն ըսինք. եւ անշուշտ ինքն է հե-
տեւեալ Յիշատակարանին մէջ յիշուած Սար-
գիսը (Մանգրն. Անտ. Թիւ ԻԵ) Մեկնութիւն Յով-
հաննու Աւետարանի ի Գր. Տաթեւացոյ գրեալ
յԱտանա ձեռամբ Յարութիւն գրչի «ի հայ-
կազեանս թուականի ՌՃՁԱ (= 1732) ապրիլի
ԻԱ օրն... ի խնդրոյ դեռաբողջոյ Սարգիս վար-
դապետի եւ եռամեծ րաբունի, զոր ստացաւ
զսա իւր հալալ ստացուածոյն եւ իւր անձին
յիշատակ...» Նոյնին շարունակութիւնն է
«Մեկնութիւն Ղուկասու Աւետարանի Իգնա-
տիոս Վ. է.». Յիշատակարանը նոյնպէս Յարու-
թիւն գրչէն «...ի խնդրոյ նորաբողջոյ ծաղկին
Տէր Սարգիս վարդապետին Կոստանդնուպոլսոյ
իւր անձինն զոր Աստուած բարեղք վայելումն
արասցէ... գրեցաւ ի թուաբերութեանս մերում
ՌՃՁԱ (= 1732) նոյեմբ. ամսոյ ԺԷ...»

Սակայն իմ ձեռքս գտնուած պաշտօնա-
կան մէկ թղթոյ համեմատ՝ Սարգիս Հռոմայ
եկեղեցւոյ դաւանութիւնը պաշտօնապէս գրով
տուած է 1743ին, երբ Զմիւռնիոյ մէջ Երու-
սաղեմայ համար նուէրներ կը հաւաքէր: Սար-
գիս Արքեպ., ինչպէս պիտի տեսնենք, Իտալիոյ